ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ, Ռ. Ա. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

1995 թ. ապրիլի 21—23-ին Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մեծ դահլիճում տեղի ունեցավ ցեղասպանության հարցերին նվիրված միջազգային գիտաժողով, որը կազմակերպել էր Հայերի ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման Պետական հանձնաժողովը ժամանակակից հայագիտական հետազոտությունների ու վավերագրման Զորյան ինստիտուտի (Բոստոն, ԱՄՆ) մասնակցությամբ ու օժանդակությամբ և Սուրեն, Հրայր, Գուրգեն Սարգսյան եղբայրների սիրահոժար նվիրատվությամբ։ Գիտաժողովում զեկուցումներով հանդես եկան մասնագետներ Հայաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, ԱՄՆ-ից, Իսրայելից, Կանադայից, Գերմանիայից ու Ֆրանսիայից, իսկ կլոր սեղանի քննարկումներում, ինչպես նաև առանձին ելույթներով՝ Հայաստանից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Անգլիայից, ԱՄՆ-ից, Բուլղարիայից, Իսրայելից, Կիպրոսից, Լիբանանից, Շվեյցարիայից։

Գիտաժողովը բացեց Պետական հանձնաժողովի անդամ, ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական, դոկտոր Ժիրայր Լիպարիտյանը։ Բացման ուղերձով հանդես եկավ ՀՀ նախագահ, Պետական հանձնաժողովի նախագահ, բ.գ.դ. Լևոն Տեր-Պետրոսյանը, իսկ ուղերձով՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն։

Բացման խոսք ասաց Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ռիչարդ Հովհաննիսյանը, որի համառոտ զեկուցումը վերնագրված էր՝ «80 տարի. Հիշողություններ ընդդեմ մոռացության»։

Լիագումար նիստում առաջինը զեկուցեց ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը՝ «Արևմտահայերի 1915—1916 թթ. ցեղասպանության պատմության մի քանի հարցեր» թեմայով։

1915—1916 թթ. ցեղասպանության մասին, նշեց զեկուցողը, գոյություն ունի հարուստ գրականություն։ Բայց չնայած դրան, հայ ժողովրդի այդ մեծ ողբերգության պատմության ուսումնասիրության գործում դեռևս առկա են որոշ թերություններ ու սխալներ։ Մեր կարծիքով, խնդրին վերաբերող մի շարք աշխատություններում բազմակողմանիորեն ու հարկ եղած խորությամբ չեն լուսաբանված, օրինակ, երիտթուրքերի (իթթիհադականների) 1909—1914 թթ. շովինիստական, պանթյուրքական գաղափարախոսությունն ու քաղաքական գործունեությունը, հստակորեն չեն բացահայտված Մեծ Եղեռնի գլխավոր պատճառները, մեծ տերությունների դիրքորոշումը Հայկական հարցում և այլն։ Լուրջ թերություն պետք է համարել նաև այն, որ հայերի ցեղասպանության մասին գրող եվրոպական ու ամերիկյան պատմաբանների մեծ մասը դեռևս չի օգտագործել Ռուսաստանի ու Հայաստանի պետական արխիվներում պահվող համապատասխան հարուստ նյութը։ (Մ. Ներսիսյանի զեկուցումը տպագրված է «Հանդեսի» 1995 թ. սույն համարում։

Հայաստանից զեկուցումներով հանդես եկան ևս չորս պատմաբաններ։ Պ.գ.դ. Ռուբեն Գ. Սահակյանի զեկուցումը նվիրված էր ցեղասպանության պատմագրության մեթոդաբանական հարցերին։ Վեր հանվեցին խորհրդային, արևմտյան և թուրքական պատմագրության մոտեցումները, պատմական

փաստերի, վավերագրերի ընտրության ու օգտագործման եղանակները։ Թուրք պատմաբաններն, օրինակ, շրջանցում են դիվանագիտական այն փաստաթղթերը, որոնք պարզապես հնարավոր չէ հերքել։ 1915-ի զանգվածային ցեղասպանությունը ժխտելու իրենց փորձերում նրանք հիմնականում հենվում են թուրք պաշտոնական տեսակետի վրա, այն է՝ արևմտահայերի բռնագաղթ չի եղել, եղել է ժամանակավոր տեղահանություն ռուս-թուրքական սահմանից հեռու ընկած վայրերը, նաև, որ գոյություն չի ունեցել հայերի ոչնչացման ծրագիր, ուստի կատարվածը չի կարելի որակել որպես ցեղասպանություն։ Սակայն 1990-ական թթ. տպագրված մի քանի գործերում թուրք հեղինակները (Թահսին Ջելյալ, Թաներ Աքչամ, Ռագըբ Զարաքօլու, Ֆիքրեթ Ադանըր) փորձում են չկրկնել «Թուրքիայի պատմության ընկերության» բազմաթիվ հրատարակությունների թյուր փաստարկված տեսակետներն ու հիմնաղուրկ պնդումները և բացեիբաց ասել Հայկական հարցը «լուծելու» մեթոդների մասին։ Զեկուցողը խոսեց նաև ցեղասպանության ֆենոմենի ընդհանրությունները վերհանելու հետ մեկտեղ յուրաքանչյուր ցեղասպան գործողության առանձնահատուկ կողմերը շեշտելու անհրաժեշտության, պատմաբանի անկողմնակալության ու գիտական բարեխղճության, ցեղասպանության դրդապատճառների ու հետևանքների ուսումնասիրության առաջնահերթության մասին։ Նա, նշելով հայոց ցեղասպանության սակավ ուսումնասիրված խնդիրները, կարևորեց դրանց խորը հետազոտության անհրաժեշտությունը։ Ռ. Գ. Սահակյանի զեկուցումը ցույց տվեց, թե որքան կարևոր են հայոց ցեղասպանության մեթոդաբանական բնույթի ուսումնասիրությունները։

Պ.գ.թ. Ռուբեն Սաֆրաստյանը գիտաժողովին ներկայացրեց «Քաղաքական կուսակցությունը և ցեղասպանությունը. Միություն և առաջադիմություն կոմիտեն «վերջնական լուծման» նախաշեմին» վերնագիրը կրող իր ուսումնասիրության արդյունքները։ Զեկուցողը, հենվելով «Իթթիհադ վե Թերաքքի» կոմիտեի ծրագրային փաստաթղթերի և նվազ հայտնի նյութերի վրա, ցույց տվեց, որ հիշյալ կուսակցությունը, հիմնադրման առաջին իսկ տարիներից նպատակադրվել էր իշխանության գալուց հետո, ընդդիմադիր ուժերին մեկուսացնելով, դառնալ միահեծան, ինքնիշխան, անսահմանափակ լիազորություններով օժտված մի հզոր ուժ, որն իր կամքն է թելադրում հասարակությանը, իր որոշումները՝ պետական կառույցներին։ Ի վերջո, «Իթթիհադը» արդեն առաջին աշխարհամարտի նախօրեին վեր էր ածվել կուսակցություն-պետության, հնարավորություն ստանալով հասարակական բոլոր խավերին պարտադրել իր գաղափարախոսությունը՝ թուրքիզմը կայսրության ներսում, պանթյուրքիզմը՝ նրա սահմաններից դուրս, առաջին հերթին իսպառ վերացնելով այդ ծրագրի իրականացմանը խոչընդոտող բոլոր հպատակ ժողովուրդներին՝ հայերին, հույներին և մյուսներին։ Այդ ձևով էին երիտթուրքերը մտադիր ոչ միայն փրկել կայսրությունը, այլև ընդարձակել այն։

Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Անուշ Հովհաննիսյանի զեկուցումը վերնագրված էր «Թուրքիա. մշակութային ցեղասպանություն»։ Ցույց տրվեց, որ արևմտահայերի զանգվածային ոչնչացմանը հետևեց Արևմտյան Հայաստանի տարածքում և կայսրության հայաշատ այլ վայրերում հայ ժողովրդի ստեղծած մշակութային արժեքների հափշտակում կամ բարբարոսական ոչնչացում, որը շարունակվում է ցայսօր։ Ուստի անհրաժեշտ է միջազգային համապատասխան կազմակերպությունների (ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՕ և այլն) միջամտությունը՝ կանխելու համար հետագա կորուստները։

Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Գայանե Մախմուրյանը զեկուցեց «Սոցիալական ճգնաժամ, արտաքին քաղաքականության երկընտրանքներ և ցեղասպանության սպառնալիքը» թեմայով։

Փ.գ.թ. Վիկտոր Նադեին-Ռաևսկին (Մոսկվա) իր զեկուցման մեջ կանգ առավ ցեղասպանության ծագման դեպքերի վրա, անդրադարձավ նրա կիրառման եղանակներին, նրա թողած հետևանքներին։ Զգալի տեղ էր հատկացված նախկին Խորհրդային Միության տարածքում տեղի ունեցած բարբարոսական

ակտերի քննությանը։ Նշվեց, որ առանձին դեպքերում հնարավոր է եղել կասեցնել արդեն ծայր առած չարդերը։ Զեկուցողը շեշտակիորեն դրեց պատմական պատասխանատվության և փոխհատուցման հարցը։

Առավել մեծ թիվ էին կազմում Ամերիկայի Միացյալ Նահանգների և Կանադայի հետազոտական տարբեր կենտրոնների գիտաշխատողների և համալսարանական դասախոսների զեկուցումները։ Այսպես, Ա. Վրիոնիսի անվան հետազոտական կենտրոնի (Սակրամենտո, ԱՄՆ) աշխատակից, դոկտոր Ջեյմս Ռիդը զեկուցեց «Բռնակալության օսմանյան կոնցեպցիան որպես հպատակների դիվականացման աղբյուր. պահպանողական օսմանականությունը կոտորածային վարքագծի պատճառ. 1821—1918 թթ.» թեմայով, որը հետաքրքիր էր նաև այն առումով, որ զեկուցողը արտասահմանյան սակավաթիվ մասնագետներից է, ովքեր հնարավորություն են ունեցել պրպտումներ կատարելու Թուրքիայի Հանրապետության արխիվներում։ Նա հետազոտողների ուշադրությունը հրավիրեց հայերի ցեղասպանությունն իրականացնողների՝ երիտթուրքերի գաղափարախոսության այն կողմերի վրա, որոնք մինչև այժմ քիչ են հետազոտվել։ Խոսքը այսպես կոչված «օսմանյան պահպանողականության» մասին է։ Հենվելով սկզբնաղբյուրների վրա, Ջ. Ռիդը ցույց տվեց, որ դեռևս միջնադարից օսմանյան քաղաքական ընտրանին սուլթանի իշխանության դեմ ապստամբած ժողովուրդներին փորձում էր դիտել որպես սատանայի կամքի իրականացողներ։

Ցեղասպանության ուսումնասիրության ինստիտուտի տնօրինուհի, պրոֆ. Հելեն Ֆայնի (ԱՄՆ) զեկուցման մեջ, որը վերնագրված էր «Տեսությունների փորձարկումը վայրագությամբ. Հայաստան, 1915, Բոսնիա, 1992, Ռուանդա, 1994», հիմնական շեշտը դրվում էր նշված երկրներում գործադրված բռնությունների ու զանգվածային սպանությունների ընդհանուր կողմերի վրա։ Ցավոք, չբացահայտվեցին յուրաքանչյուր դեպքի տարբեր դրդապատճառներն ու իրենց չափերով միանգամայն տարբեր հետևանքները։

Ամերիկայի հայկական համագումարի (Վաշինգտոն) հետազոտությունների և վերլուծությունների կենտրոնի տնօրեն դոկտ. Ռուբեն Ադալյանը զեկուցեց այն նոր հարցադրումների մասին, որոնք կարող են դիտվել որպես հայոց ցեղասպանության հետևանքների ուսումնասիրման մեթոդաբանություն։ Նա ընդգծեց 1915-ի ոճիրի բազմապիսի հետևանքների բացահայտման արդիականությունը, Եղեռնը վերապրածների կյանքը, անցած ուղին, տառապանքները, հոգեկան ապրումները, հոգեբանական նստվածքները, պատմական հիշողությունները մանրակրկիտ ուսումնասիրելու անհրաժեշտությունը։ Զեկուցողը ցույց տվեց նաև, թե ինչպես են վերապրողները, հաղթահարելով Եղեռնի ծանրագույն հարվածները, գոյատևել ու բարգավաճել։ Ռ. Ադալյանը կանգ առավ նաև թուրքական պետության կողմից գործադրված հայասպանության մեթոդների վրա։

Նևադայի համալսարանի պրոֆ. Պերճ Բերբերոզլուի զեկուցման թեման էր «Հայոց ցեղասպանությունը պատմական դիտանկյունից։ Սոցիոլոգիական վերլուծություն», որը մի փորձ էր հարցը մեկնաբանելու այդ գիտությանը հատուկ հետազոտական մեթոդների հիման վրա։

Ցեղասպանության հարցի հայտնի մասնագետ, պրոֆ. Ֆրանկլին Լիթըլը (ԱՄՆ) «Չարի հաջորդականության կասեցումը» վերնագրով իր զեկուցման մեջ ցեղասպանության երևույթը քննեց փիլիսոփայական-աստվածաբանական տեսանկյունից, դիտելով այն որպես չարի և բարու դարավոր պայքարում չարի ժամանակավոր հաղթանակ։ Նա ձևակերպեց հետևյալ կարևոր թեզը. ամեն մի չդատապարտված ցեղասպանության դեպք հանգեցնում է ցեղասպանության երևույթի կրկնությանը այլ պատմական պայմաններում և հաճախակի ավելի մեծ մասշտաբներով։ Այդ թեզը նա հիմնավորեց հայերի և հրեաների ցեղասպանությունների միջև համեմատական վերլուծություն անցկացնելով, գալով այն եզրակացության, որ հայերի ցեղասպանության նկատմամբ համաշխարհային հասարակական կարծիքի անտարբե-

ությունը հանգեցրեց հրեաների ցեղասպանությանը։ Նա առաջարկեց ավելի հանգամանորեն և բազմակողմանի ուսումնասիրել ցեղասպանությունը նախապատրաստած և այն ղեկավարած գործիչների՝ Թալեաթի, Բեհաեդդին Շաքիրի, Հիտլերի մարդկային էությունը, բնութագրելով նրանց որպես «սահմանային անհատականություններ», որոնց համար արդեն չեն գործում բարոյականության նորմերը։

Երկու զեկուցում նվիրված էին ցեղասպանությունների առանձին դեպքերի համեմատական ուսումնասիրությանը։ Դրանցից առաջինի հեղինակը՝ պրոֆ. Բեն Քըրնընը (ԱՄՆ) համեմատություն անցկացրեց հայկական և կամպուչիական ցեղասպանությունների միջև։ Ինչ խոսք, համեմատական ուսումնասիրությունները նպաստում են ցեղասպանության, որպես երևույթի, ավելի խորը ընկալմանը, և այդ առումով Քըրնընի զեկուցումը հետաքրքիր էր։ Սակայն նման համեմատական ուսումնասիրությունների արժեքը ավելի բարձրանում է այն դեպքում, երբ նրանք խարսխվում են երկու կարևոր նախապայմանի վրա. ա) փաստացի նյութի լավ իմացություն, բ) մեթոդաբանական կոռեկտ մոտեցում։ Մինչդեռ պրոֆեսոր Քըրնընը ոչ միշտ էր հետևում այդ սկզբունքներին։ Այսպես, հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչը նա համարեց Էնվերին և համեմատեց նրան Պոլ Պոտի հետ, այդ հիմնաթեզի վրա կառուցելով իր համեմատական վերլուծությունը։ Հատկանշական է, որ քննարկման ընթացքում Քըրնընի մոտեցումը քննադատվեց ցեղասպանությունների համեմատական ուսումնասիրությանը նվիրված մյուս զեկուցման հեղինակի՝ պրոֆ. Ֆրանկ Սիսինի (Կանադա) կողմից։ Սակայն ճիշտ չէր Սիսինը, երբ իր զեկուցման մեջ փորձեց պնդել, թե ուկրաինացիների մահվան մասսայական դեպքերը (Ստալինի վարչակարգի կողմից արհեստականորեն առաջացրած սովի պատճառով) կարելի է բնութագրել որպես ցեղասպանություն։

Գիտական նստաշրջանին իրենց մասնակցությունը բերած արտասահմանյան ճանաչված մասնագետների թվին է պատկանում պրոֆ. Իրվին Հորովիցը (ԱՄՆ)։ Ընդհանրացումներով աչքի ընկնող իր զեկուցման մեջ նա ժամանակակից հասարակագիտության տեսանկյունից բնութագրեց ցեղասպանություն իրականացրած պետությունը, ինչպես և նրա տարբեր կառույցների այն պաշտոնյաներին, ովքեր ոճիրի մասնակից էին դարձել։ Ակտուալ հնչեց (հայերի ցեղասպանության ուսումնասիրողների համար) նրա թեզն այն մասին, որ անհրաժեշտ է ավելի խորը ուսումնասիրել ցեղասպանության զոհի հակազդեցության ամենատարբեր՝ ինչպես խաղաղ, այնպես էլ զինված ձևերը։

Մի քանի զեկուցողներ աչքի ընկան կոնկրետ պատմական նյութի լավ իմացությամբ։ Դրանցից առաջին հերթին անհրաժեշտ է նշել պրոֆ. Վ. Տատերյանին (ԱՄՆ), որը խոսեց «Պետության և կառավարող կուսակցության միաձույլ դերը հայկական ցեղասպանության մեջ» թեմայով։ Նա հիմնավորեց այն թեզը, որ հայերի ցեղասպանությունը նախապատրաստել է երիտթուրքական կուսակցությունը, իսկ պետությունը եղել է լոկ լծակ նրա ձեռքում։ Պրոֆ. Տատերյանը հրապարակեց նաև մի քանի նոր փաստեր, որոնք ճշտում են մեր պատկերացումները ցեղասպանության նախապատրաստման գործընթացի մասին։ Մասնավորապես նա նշեց, որ այդ գործընթացում կարևորագույն դեր են կատարել Բեհաեդդին Շաքիրը, Նազիմը և Զիյա Գյոքալփը, նույնիսկ ավելի կարևոր, քան Թալեաթը կամ Էնվերը։

Ցեղասպանության ժխտման հոգեբանությանն ու ցեղասպան քաղաքականության հարցերին էր նվիրված պրոֆ. Հենրի Հութթեհբախի (ԱՄՆ) զեկուցումը։

Երկու զեկուցում նվիրված էր ցեղասպանության տարբեր դեպքերի դասակարգմանը։ Պրոֆ. Ռոջեր Սմիթի (ԱՄՆ) զեկուցումը՝ «Պետությունը և ցեղասպանության նպատակը. ցեղասպանությունների կիրառումը XX դարում» հետաքրքիր էր իր ընդհանրացումներով։ Նա առաջարկեց ցեղասպանությունը-

ները, ըստ նրանց կազմակերպիչների նպատակների, դասակարգել հետևյալ հինգ խմբերի. առաջին՝ պատժիչ, երկրորդ՝ ինստիտուցիոնալ, ինչը հատուկ էր հին և միջին դարերի խոշոր նվաճումների շրջանին, երրորդ՝ ուտիլիտար, որի իմաստը հետևյալում էր. «որոշ մարդիկ պետք է մահանան, որ մյուսները կարողանան ապրել»։ Դա հատուկ էր գաղութային շրջանին։ Չորրորդը՝ մենաշնորհային, որի նպատակն է վերացնելով բնակչության որոշ խմբեր, ապահովել մեկ խմբի բացարձակ գերիշխանությունը տվյալ պետությունում, և վերջապես հինգերորդ՝ գաղափարական։ Կարևոր էր նրա այն թեզը, որ հայերի «սիստեմատիկ ոչնչացումը» օսմանյան Թուրքիայում հանդիսանում է XX դարի ցեղասպանությունների նախատիպ։ Պրոֆ. Յահուդա Բաուերը (Իսրայել) դասակարգումը կատարեց հենվելով ցեղասպանությունների պատճառների քննության վրա։ Նրա զեկուցումը այդպես էլ վերնագրված էր՝ «Ցեղասպանության պատճառները, համեմատական պատկեր»։ Նշելով, որ ցեղասպանությունը դա էթնիկական միավորի ոչնչացում է, պրոֆ. Բաուերը համառոտ բնութագրեց XX դարում տեղի ունեցած մի քանի ցեղասպանությունների դեպքեր։ Հատուկ ուշադրություն հատկացնելով հրեաների ցեղասպանությանը՝ հոլոքոստին, նա հանգեց այն եզրակացության, որ միայն վերջինս է հանդես գալիս որպես «ամբողջական (տոտալ) ցեղասպանություն», քանի որ ունի ցեղասպանությանը հատուկ բոլոր բնորոշ գծերը, մասնավորապես՝ այն նպատակաուղղված էր հրեաների լիովին ոչնչացմանը ամբողջ աշխարհում, ի տարբերություն հայերի ցեղասպանության, որի հեղինակները չէին ծրագրել «ոչնչացնել հայերին Օսմանյան կայսրության սահմաններից դուրս»։ Բաուերի զեկուցման որոշ թեզերի հետ չհամաձայնվեց պրոֆ. Վ. Տատրյանը, մասնավորապես նշելով, որ երիտթուրքերը, 1918 թ. նոր տարածքներ գրավելով Անդրկովկասում, այստեղ էլ շարունակեցին իրենց հայաջինջ քաղաքականությունը։ Նա ընդգծեց, որ հայերի ցեղասպանությունն իր մեջ պարունակում է ցեղասպանությանը հատուկ բոլոր գծերը։

Մեծ հետաքրքրություն առաջ բերեց Համբուրգի սոցիալական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող, ազգությամբ թուրք, Թաներ Աքչամի զեկուցումը՝ «Հայոց ցեղասպանությունը և թուրքերի լռությունը»։ Հիշյալ հեղինակը հայտնի դարձավ 1992 թ. Ստամբուլում հրատարակված «Թուրք ազգային ինքնությունը և Հայկական հարցը» խորագրով գրքով, որը վերջերս լույս տեսավ Մոսկվայում ռուսերեն։ Նախքան Երևան գալը, Թ. Աքչամը 1919—20 թթ. երիտթուրքերի դատավարության մասին զեկուցումով հանդես էր եկել ապրիլի 18—19-ին, Մոսկվայի միջազգային գիտաժողովում։

Երևանի գիտաժողովում նա ծանրացավ հայերի ցեղասպանության փաստը իր երկրում չճանաչելու, ուրանալու հիմնական պատճառների վրա։ Դրանցից գլխավորը, զեկուցողի կարծիքով, թուրքական հասարակությանը հատուկ մոռացկոտությունն է, պատմական մտածողության բացակայությունը։ Բացի դրանից, մարդիկ, հասարակությունը, չեն ցանկանում իրենց հիշողության մեջ պահել «ցնցող դեպքերը», տհաճ պատմությունները։ Նաև այն, որ նոր սերունդը գրեթե ոչինչ չգիտի 1915-ի մասին։ Սակայն Թուրքիան չի կարողանա իր համար նոր կերպար ստեղծել, քանի դեռ նա չի ճանաչել հայերի ցեղասպանությունը։ Հետաքրքրական էր Թ. Աքչամի բերանով արտահայտված այն միտքը, որ Թուրքիայի Հանրապետության ստեղծումը էապես աղնչվում է հայերի գենոցիդի հետ, այսինքն, որ միայն կատարվածից հետո

հնարավոր դարձավ հիմնել նոր Թուրքիա, որը և վերջինս ստիպեց վավերացնել Լոզանի վեհաժողովում։

Հայերի ցեղասպանությանը նվիրված մի քանի դրքերի ֆրանսիացի հեղինակ դոկտ. Իվ Թերնոնի զեկուցումը ընթերցեց պրոֆ. Անահիտ Տեր-Մինասյանը։ Թեման էր՝ «Ցեղասպանությունից հետո ինչպե՞ս վերականգնել անվերականգնելին (չորս ցեղասպանության համեմատություն)»։ Հեղինակը, զուգահեռներ անցկացնելով հրեաների, հայերի, կամբոջացիների ու գնչուների ոչնչացման մեթոդների միջև, հանգեց այն եզրակացության, որ բոլոր դեպքերում մեղավորը «հանցավոր պետությունն է»։ Ինչ վերաբերում է հայերի ցեղասպանությանը, նշենք, որ Թերնոնը արտասահմանյան այն մասնագետներից է, ովքեր միանշանակ ու անվերապահորեն ընդունում են 1915-ի ոճիրը, որպես կատարյալ ցեղասպանություն, միաժամանակ քննադատելով ժամանակակից թուրք պատմաբանների անազնիվ դիրքորոշումը։

Գիտաժողովի վերջին նիստը հատկացված էր կլոր սեղանի քննարկումներին, որոնք վարում էր պրոֆ. Էրվին Սթաուբը (ԱՄՆ)։ Նա կարևորեց ցեղասպանությունը վերապրողների ապաքինման և այդ ոճիրի կանխման փոխկապակցվածությունը։

Պ.գ.դ. Վ. Միքայելյանը (Երևան) իր ելույթում կարևորեց երկու հարց. առաջին՝ հայերի ցեղասպանության լուսաբանման գործում 1914—1918 թթ. Թուրքիայում ծառայած գերմանական դիվանագետների և զինվորական գործիչների պաշտոնական հաղորդումների նշանակությունը։ Նա շեշտեց այն հանգամանքը, որ լինելով պատերազմում Թուրքիային դաշնակից երկրի փաստաթղթեր, այդ վավերագրերը զրկում են թուրքական կողմին կասկածի տակ վերցնելու դրանց հաղորդած տվյալները։ Երկրորդ՝ նա կանգ առավ այն խնդրի վրա, թե ինչպես պանթյուրքիստական պլանների իրագործման ճանապարհին երիտթուրքական կառավարությունը իր առաջին հարվածն ուղղեց հայերի դեմ։ Այս կապակցությամբ նա նշեց երեք նկատառում. 1. հայերը մշակութային և կրոնական առումով ամենից ուժեղ էին դիմադրում իսլամացման-օսմանացման քաղաքականությանը։ 2. Հայերն ու Արևմտյան Հայաստանը ընկած էին պանթյուրքական պետության ստեղծման ճանապարհին։ 3. Պատերազմական վիճակը հնարավորություն էր տվել երիտթուրքերին ավելի հեշտությամբ հաշիվ տեսնել հայերի հետ, քանի որ սկզբնապես հայերը զրկված էին զրսի աշխարհի անմիջական օգնությունից։

Պ.գ.դ. Ստեփան Ստեփանյանը նշեց, որ ցավոք, գիտաժողովում քննարկման առարկա չդարձավ ցեղասպանության ամբողջական պրոբլեմի մյուս կարևորագույն մասը՝ ցեղասպանության հետևանքների վերացման խնդիրը։ Այս տեսանկյունից հայերի ցեղասպանությունն ունի իր յուրահատկությունները, այսինքն, որ արևմտահայությունը ցեղասպանության է ենթարկվել իր պատմական հայրենիքում, կորցնելով նրա մեծ մասը, նաև այն, որ բնաջնջվել է հայ ժողովրդի զգալի մասը։ Ցեղասպանությունից փրկված հայության բեկորները սփռվել են աշխարհով մեկ։ Այսօր սփյուռքում ապրում է շուրջ չորս միլիոն հայ։ Օրինական հարց է ծագում՝ մինչև ե՞րբ պետք է այդ բեկորները մնան օտար հողում, ե՞րբ պետք է նրանց վերադարձվի իրենց հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը։ Ուստի միանգամայն արդարացի է հայության պահանջատիրությունը։ Որպես ցեղասպանության հետևանք այդ հարցը պետք է լուծվի։ Բացի դրանից, ավելացրեց նա, արևմտահայությունը

կրել է նյութական և մշակութային արժեքների մեծ կորուստ, որը պետք է հատուցվի։

ՀԱԱ թղթակից անդամ, պատմության ինստիտուտի տնօրեն Հրանտ Ավետիսյանը նշեց, որ գիտաժողովում վերհանվեցին եվրոպական, ռուսական, ամերիկյան, արաբական, թուրքական, հայկական պատմագրության մոտեցումները ցեղասպանության հիմնահարցի վերաբերյալ։ Բացահայտվեցին ցեղասպանության սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրոնական նախադրյալները։ Առաջ քաշած հարցերը ոչ միայն ընդլայնեցին իմացության սահմանները, այլև առաջադրեցին նոր խնդիրներ հետագա ուսումնասիրությունների համար։ Այս առումով, անշուշտ, գիտաժողովը ծառայեց իր նպատակին. նրա մասնակիցները գիտականորեն վերլուծելով հայերի ցեղասպանությունը՝ դատապարտեցին այն։

Հետաքրքրությամբ լսվեցին երիտասարդ հետազոտողներ Արա Սարաֆյանի (Մեծ Բրիտանիա) և Հիլմար Կայզերի (Գերմանիա) ելույթները՝ օսմանյան արխիվներում իրենց աշխատանքի արդյունքների մասին։ Արա Սարաֆյանը կոնկրետ օրինակներով ցույց տվեց, թե ինչպես թուրք պատմաբանները, օգտվելով այն հանգամանքից, որ օտարազգի մասնագետների համար դժվար հաղթահարելի արգելքներ են ստեղծված օսմանյան արխիվներում աշխատելու համար, իրենց աշխատություններում, հրապարակելով արխիվային փաստաթղթեր, դիմում են նուրբ կեղծիքների։ Հ. Կայզերը ընդգծեց, որ օսմանյան արխիվները առաջնային նշանակություն ունեն հայերի ցեղասպանության հետ կապված մի շարք խնդիրների ավելի խորը ուսումնասիրման համար։

Պրոֆ. Անահիտ Տեր-Մինասյանը (Ֆրանսիա) կանգ առավ այն խնդիրների վրա, որոնք իր կարծիքով, դուրս են մնացել դիտաժողովի մասնակիցների ուշադրությունից։ Որպես օրինակ նա բերեց ցեղասպանություն և սփյուռք, ինչպես նաև ցեղասպանություն և միջազգային իրավունք պրոբլեմները։ Քրիսթոֆըր Ուոքըրը (Մեծ Բրիտանիա) հետազոտողների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ Օսմանյան կայսրությունը XX դարի սկզբին չափազանց քաղաքականացված պետություն էր, որտեղ իսլամի կրոնը որոշիչ դեր չէր կատարում։ Նա ընդգծեց թուրքական «ժխտման կոնցեպցիայի», թուրք պատմաբանների փաստարկումների ավելի խորը ուսումնասիրման կարևորությունը։

Գիտաժողովի արդյունքներն ամփոփեց Հայաստանի Հանրապետության նախագահի գլխավոր խորհրդական, պետական հանձնաժողովի անդամ Ժիրայր Լիպարիտյանը, իսկ գիտաժողովի կազմակերպմանն իր մասնակցությունը և օժանդակությունը բերած, ժամանակակից հայագիտական հետազոտությունների ու վավերագրման Ջորյան ինստիտուտի (Բոստոն, ԱՄՆ) անունից հայտարարությամբ հանդես եկավ պրն. Գուրգեն Սարգսյանը։

Վերջում ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը գիտաժողովում զեկուցումներով ու ելույթներով հանդես եկած գիտնականներին հանձնեց ՀՀ նախագահի կողմից ստորագրված շնորհակալագրեր։

МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ, ПОСВЯЩЕННАЯ 80-ЛЕТИЮ ГЕНОЦИДА АРМЯН

Доктор ист. наук Р. Г. СААКЯН, Р. А. САФРАСТЯН

Резюме

21—23 апреля 1995 г. в Ереване, в Конференц-зале Национальной академии наук Республики Армения состоялась международная конференция по проблемам геноцида. Она была организована Государственной комиссией РА по мероприятиям в связи с 80-летием геноцида армян при участии и содействии «Института Зорян по современным арменоведческим исследованиям и документации» (Бостон, США). В работе научной сессии принимали участие специалисты из Армении, Российской Федерации, США, Израиля, Канады, Германии, Франции, Великобритании, Болгарии, Кипра, Ливана и Швейцарии. В докладах и за «Круглым столом» были подвергнуты критическому анализу и осмыслению разные аспекты проблемы геноцида в целом, дан сравнительный анализ истории геноцидов, причин и последствий этого преступления против человечества. Были заслушаны доклады о методологических подходах при изучении этой проблемы, а также по историографии геноцида армян. Участники конференции в выступлениях подчеркнули необходимость принятия конкретных шагов как со стороны правительств и мирового сообщества в целом, так и соответствующих специалистов разных стран — историков, социологов, философов, психологов и др. для пресечения актов геноцида, в какой бы форме эти действия не предпринимались (этнические погромы, биологический, культурный и др. формы геноцида).